ներ ունի և այն կարողութիւնները ինչ բանի պիտի գործածէ ։ Գիրք մը պէտք է որ բուն ժողովուրդին հետ խօսի, անոր սիրտն ու միտքը մտնէ և հոնկէ քաշէ հանէ այն ամեն խառն 'ի խուռն գաղափարները՝ որոնցմով անպիտան տեղը տագնապած է իր ազնիւ ու անմահ հոգին. այլ սակայն թողուած է այս և աստ պէս ժողովուրդին օգտակար մեծամեծ բարոյական պիտոյքները և ետեւէ ինկած են սնոտի փառաց, վայրկենական պարծանաց, ընկեր ընկերի վրայ յաղթանակ կանգնելու համար զանազան վատ ու նուաստ միջոցներու կը դիմեն, իրարու սիրտ կը վիրաւորեն անվայել կերպիւ և անիրաւ տեղը։ Այն լեզուն, այն միտքը և այն վսեմ բանականութիւնը զոր բարերար Նախախնամութիւնը շնորհած է իրարու օգնելու զիրար շահելու, կը գործածուին ընկերին դէմ երբ զէնք մահառիթ և գովեստի արժանաւոր որոնք նախատանօք կը վիրաւորեն, սակայն չենք ուզեր չը յիշել նաեւ այն պատուական գրիչները, որք իրենց հմուտ տաղանդովը կը ձգնին միշտ պարկեշտ ու օրինաւոր կերպիւ ողջմտութեամբ պարզել ամեն խնդիրները և հասարակութիւնը կրթել, անոնք շնորհակալութեան և խորին յարգանաց արժանի են, այո, երախտապարտ կը դաւանինք զմեզ այն անոնկուն միտքերուն որք ճշմարտութիւը կը պաշտպանեն, ժողովուրդի պարտքն ու իրաւունքը կը ճանչցունեն, անոր առջեւ բացուած մօտալուտ վտանգը մատնանիշ կը ցուցընեն, անկէ զգուշանալու կերպերը կը սովրեցունեն. այս է գիտունին պարտքը։ Մենք ալ այսօր այս առթիւ կ'աղաչենք, ու կը խնդրենք ձեռնհաս ուսումնական անձերէ որ չի կասին ճշմարտութիւնը խօսելէ որ կարող է թէ վերենք և թէ հասարակութիւնը վտանգներէ փրկել, բարեհաճին նաեւ ժողովուրդի կերպ կերպ նախապաշարումները վերցունելու համար ընտիր ու կատարեալ գիրք մը աշխատասիրել յօգուտ մարդկութեան և 'ի փառս իրենց անմահ հանճարոյն։

Զետեւեալ յօդուածը Կալիֆորնիայէն ղրկած են հրատարակելու խնդրանօք. ի խրախոյս և ի քաջալերութիւն Թարգմանչին և աշակերտակցացը հանդիսի միջոցաւ ուսումնասիրաց կը հաղորդեմք։

## ԳԻՒՏ ԴԻՏԱԿԻՆ ԵՒ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻՆ

Մին յորդւոց Ինգըլերդոյ՝ ակնոցագործի միոյ ի Հոլանտա, խաղայր երբեմն ի խանութի հօր իւրոյ, և առեալ զերկու ապակիս ի մէջ մատանց և բթի իւրոյ, այն ինչ զմտազանէր զհեռաւորութիւն նոցա. յանկարծ ըմբգայ զարմացումն մեծ ի տեսանելն զի գմբէթ եկեղեցւոյն հանդէպ իւր՝ երեւէր մեծացեալ, եւ եւս մօտաւոր քան զբնականն՝ բայց շրջեալ գլխիվայր։ Կոչեաց նա զմտադրութիւն հօր իւրոյ առ այս նոր հրաշք, և վերջինս գոլով այր բազմահմուտ և ճարտար՝ առ ժամայն սկսաւ քննել հետախուզութեամբ զպատճառ նոր օրինակ իրողութեանս, և կացուցեալ զերկու շարժական ապակիս ի վերայ տախտակի ինչ, լոկոյն յաջողեցաւ նմա առնել զգործի մի որով հեռաւոր առարկայք մատչէին տեսութեան աչաց։ Գալիլէոս Իտալացի փիլիսոփայ մի լուեալ զգիւտս լոկոյն իմացաւ զպիտանութիւն նորա, և եդ ի միտ ջանալ ամենայնիւ կատարելագործել զայն ի կիրառութիւն։ Հաստատեաց նա զապակիս ի ծայրս երկուց խողովակաց, և յետ բազում փորձառութեան

կերտեաց զդիտակ մի որ՝ կարողացոյց զնա դիտել զերկինս ։ Նովիւ սա ըզչորս լուսինս շրջապատեալ զլուսընթագ մոլորակաւ , զբիծս ի դէմս արեգական , զլերինս ի լուսնի և զբազմութիւն աստեղաց , որք յառաջն չեւ անկեալ էին ընդ տեսութեամբ աչաց ։ Գիւտ դիտակին եղեւ յամի 1610 ։ Յայնմ ժամանակէ հետէ այս գիւտանի գործի մեծապէս կատարելագործեալ է . և արդ սորին միջոցաւ կարեմք դիտել և քննել զարեգակն ըզլուսինն զմոլորակս , զգիսաւոր աստեղըս , զանշարժ աստեղս , զաստուերածս և զայլ երկնային հրաշալիս ։ Մանաւանդ կարեմք մերձեցուցանել զհեռաւորութիւնն , և վերացուցանել միլիոնաւոր մըղոնս ի բարձունս ի կամար անդ աստղալից ։ Տեսանեմք սովաւ զի գործք Ամենակալին՝ որչափ միտք մեր հասանեն գիտել՝ անճառելի են և գերահըրաշ , և այնու՝ եւս առաւել հասու լինիմք ամենակարողութեան նորա և անպարագրելի զօրութեան՝ որ կոչեաց զամենայն ի գոյութիւն Թարց օգնականութեան ուրուք և աշխատանաց . այլ "Հրամայեաց և հաստատեցան" ։

Ոչ սակաւ զարմանալի է և գիւտ մանրադիտակին , գործւոյ ինչ կազմեալ ի պէտս ցուցանելոյ խոշոր զմանր առարկայս ։ Այս գործի ի յայտ բերէ մեզ զայլ իմն տեսակս արարածոց , որոց ընդ զարմանալի փոքրկութիւն այնչափ հիանամք՝ որչափ ի նշմարելն դիտակաւ զանհասանելին մեծութիւն երկնային մարմնոց ։ Մէն մի մեղու , մէն մի տունկ , մէն մի կենդանի , և կարի չքնաղին իսկ ի նոցանէ , երեւի մեզ ապա տեսարան իմն զարմանալի ։ Տեսանեմք, օրինակի աղագաւ , զի իւրաքանչիւր մասնիկ նիւթոյ ինչ որչափ և փոնաքի , ունի դեռ եւս զսահմանեալ իմն յատկութիւն և զձեւ ։ զի և Թեփք ի մորթս ձկանց գեղեցիկս ճարահիւսեալ են որպէս յանցանհիւս պատառ ինչ նկարէն , զի ծայրք փշոյ բանջարեղինաց , Թէպէտ և հազարիցս անգամ մեծացուցեալ քան զընականն ի ձեռն գործւոյս , սակայն և այնպէս դեռ ողորկ և ողորկ երեւին աչաց , որպէս յորժամ նշմարեալ առանց մանրադիտակի , զի իւրաքանչիւր մասնիկ փոշւոյ ի Թեւս Թիթեռան է գեղեցիկ փետուր իմն , զի իւրաքանչիւր հեր գլխոյ մերոյ է որպէս գոգաւոր խողովակ մի և ունի ոստս և արմատս , և զի ծակտիկ մարմնոյ մերոյ , որով արտադրին քրտունք , այնչափ անԹիւ և մանր են. զի ցորեան մի միայն ծածկեսցէ զհազար և զքսան և հինգն ի նոցանէ ։ Ի հեղանիւթս ինչ տեսանեմք զկենդանիս այնչափ մանունս , զի յիսուն հազարք ի նոցանէ ոչ համեմատեսցին մեծութեան որդան միոյ , բայց դեռ եւս և իւրաքանչիւրն յայսցիկ կենդանեաց ունի գործարանս և անդամս բաւական ի պահպանել զգոյութիւն նոցա ։ Յանշարժ լճի ինչ , որ ծածկեալ է մամռով յընթացս ամառան , իւրաքանչիւր կաթիլ ջրոյ երեւի գոլ իբրև աշխարհ մի լի հազարաւոր բնակչօք ։ Միով բանիւ այսու պատուական գործեաւ տեսանեմք զի նոյն ձեռն Ամենակալին՝ որ կարգաւորէ զշրջանս մոլորակաց յերկինս , ի մի և նոյն վայրկենի յօրինեալ կազմէ առաւել քան զտասն հազար մանրադիտակս փոքրիկս ի բիբ աչաց ճանճից , և կերպարանէ զճիրանս և ըզԹեւս վառն չքնաղին Թիթռան ։

Թարգմանութիւն յԱնգղիականէ ի Հայ . Պէտրոս Անդրէաս Յ. Տէր Նորայրեանց Ջուղայեցի . Աշակերտ Հայոց Մարդասիրական Ճեմարանին ի Կալկաթա ։